## Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար

## XI դասարան

## ( տևողությունը՝ 120 րոպե)

**Սիրելի՛ մասնակից**

**Գարնանային բազմաթույր ծաղիկները թող հաղթանակի դափնի դառնան և զարդարեն քո անցնելիք ճանապարհը :Հաջողությո՛ւն:**

**1.Գրի՛ր Եղիշե Չարենցի՝ Միսաք Մեծարենցին նվիրված քառատողը և պարզի՛ր՝ ինչ արևի մասին է հիշատակում Չարենցը: 4մ.**

**2.Ո՞ր բանաստեղծությամբ է վերջանում Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն: Անմարմին անուրջներին ի՞նչն է փոխարինում այդ բանաստեղծության մեջ: Գրի՛ր համապատասխան քառատողը և մեկնաբանի՛ր: Գրի՛ր Չարենցի՝ Տերյանին նվիրված բանաստեղծություններից որևէ մեկը:**

**4մ.**

**3.Ե՞րբ է գրվել Եղիշե Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը. Պատմական ո՞ր դեպքերի արձագանքն է. ո՞րն է բանաստեղծի մխիթարությունը (վկայակոչել Չարենցին): 4մ.**

**4.Ինչպիսի՞ սեր է նկարագրված Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքում: Բացատրի՛ր ուսուցչի և Խոնարհի անմարմին սիրո ողբերգությունը: Նրանցից յուրաքանչյուրին ուղղի՛ր մեկ հարց և պատասխանի՛ր:**

**4մ.**

**5.Մտովին տեղափոխվի՛ր «Թումանյանի պալատ» և ներկայացրո՛ւ մեկ օրը: 4մ.**

**Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան**